



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՒՑԱՆ

ՊԱՇ-ԱՎԵԼԻԱՆԻ ԽԱՆՉԻ ԽԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ
ՅԵԿ ՊԱՇՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՂԱՐՄԱՆ Ե

Մ. ՑԱՅՆԻՑԱՆ

№ 19

ԻՆՉՊԵՍ ՓՈՐՁԵՐ ԴՆԵԼ
ՃԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒՆԹԵՐՈՎ



«ՊԱՇ-ԱՎԵԼԻԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ

1930

1977

1977

1977

1977

Էլեկտր Ջեղ. ՀՅԱՀ ՊՐՁԵ-ՇՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԾ-ԱՎՀԱՄԲԻԾ ԽՈԶՄ-Ի ԽԱՂԱՐ ՍԵԽԱՄԱՆՔ
ՅԵԿ ՊԱՏԾՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԵԽԱՐՄԱՆ Ե


Մ. ՀԱՅԼԱԽԱՆ

631.8

№ 19

A 4199

ԻՆՉՊԵՍ ՓՈՐՁԵՐ ԴՆԵԼ
ՃԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐՈՎ



«ՊԱՏԾ-ԱՎՀԱՄԲԻԾ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵԽԱՐՄԱՆ Ա. Պ.

1930

ՀԱՅՈՈՒԹԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ԹԱՏ. 1715
ԳՐԱՌԵՎ. № 4086 (Բ)
ՏԻՐԱԺ 2000

1. ՅՈՒՅՍԵՐԻ ՄՆՎԵԼԲ ՀԱՆՔԱՅԻՆ ԱԿԵՐՈՒԾ

Վորովեսդի սերմբ կարողանաւ ծիւլ ու ամել հողի մեջ ու դառնալ բույս, իսկ վորովեսդի բույսը կարողանաւ զարդանալ ու բերք տալ, հարկավոր է, վոր հողի մեջ լինեն ջուր և սննդանյութեր: Այդպիսի սննդանյութեր են հանքային աղերը: Հանքային աղերը լուծվում են ջրի մեջ և ջրի հետ միասին անցնում բույսի մեջ: Վորովեսդի ջուրը և նրա հետ հանքային աղերը խով թափանցեն բույսի մեջ, նրա մատադ մասերում կան մաղիկներ, վորոնք սեղմ կերպով միանում են հողի մասի մասնիկներին և ծծում ջուրը՝ նրանում լուծված աղերի հետ միասին (նկ. 1):



Զուրն ու աղերը արմատի և ցողունի միջոցով արածվում են ամբողջ բույսի մեջ և սննդագ աալիս նրան: Էռոյսի և արեի ճառագայթների աակ, բույսն այդ աղերից կառուցում է իր մարմինը, ապ բում և ե բերք տալիս: Յեթե բույսերը ցանվում են այնպիսի հողում, վորտեղ բացակայում են հիշված հանքային աղերը, ապա նրանք սկզբում մի քիչ զարդանում են ի հաշիվ սերմի մեջ յեղած սննդանյութերի, իսկ այնուհետեւ, յերբ այդ սննդանյութերը կսպառվեն, բույսերը կոկուն թուլանալ և ի վերջո կվոչնչանան:

Նկ. 2. Նման բույսերից վոչ մի բերք չի ստաց. ԿՈՏԵՄԻ ԱՐՄԱՏԻ վի: Եշանակում և բույսն աճում ու զարգացնում զանում և միայն այնպիսի հողում, վոր-թՅՈՒՆԸ

ւեղ կան հանքային աղեր և բերքն ամբողջապես կախված է նրանցից : Բոլորին հայտնի յե, վոր լավ բերք սուացվում է հարուստ հողից, իսկ հարուստ է հենց այն հողը, վորն իր մեջ շատ հանքային աղեր և պարունակում :

Իրոք, յեթե ջուրը լինի, աղերը չեն կարող թափանցել բույսի մեջ, վորովհետեւ նրանք բույսի մեջ կարող են մտնել միայն այն ժամանակ, յերբ լուծված լինեն ջրում : Յերբեք բույսի մեջ զուտ մաքուր ջուր չի մտնում, միշտ ել նրա հետ անցնում են լուծված հանքային աղեր : Յուրաքանչյուր գյուղացի գիտե, վոր ինչքան ել հարուստ լինի հողը, ինչքան ել հանքային աղերը շատ լինեն նրանում, այնուամենայնիվ, յեթե նա շոր մնա, բույսերը կվոշնչանան, վորովհետեւ նըրանց հարկավոր է ջուր, իսկ ջրի հետ՝ նաև հանքային աղեր :

II. ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԹՍԵՐԻ ՀԱՄԱՐ

Յայց ի՞նչ բաներ են հանքային աղերը և արդյոք նրանք բոլորն ել հարկավոր են բույսի համար, թե՞ միայն՝ նրանցից մի քանիսը : Հողը վարելու կամ վորելու ժամանակ առանձին վոշինչ չի նկատվում, վոր հեշեցնի, թե նրա մեջ աղեր կան : Հասարակ աշխով նըրանց տեսնել հնարավոր չե, վորովհետեւ հողի ընդհանուր քանակության հետ համեմատած, նրանք չափագանց քիչ են և մասամբ լուծված հողում յեղած ջրի մեջ, մասամբ ել խառնված հողի մասնիկների հետ : Աղատներում նրանց կարելի յե տեսնել հասարակ աշ-

բով - այդպիսի տեղերում, արևի տաք հառակայթների տակ, Հողի մեջ յեղած ջուրն սկսում է բարձրանալ մակերեսը և դոլորշիանալ: Զրի Հետ Հողի մակերեսն են բարձրանում նաև նրանում լուծված աղերը և յերր ջուրը դոլորշիանում և, նրանք մնում են Հողի յերեսին սպիտակ փոխածքի ձեռվ և տեսանելի դառնում հասրակ աչքով:

Վարպետի իմանան, թէ ինչ աղեր են դրանք, ինչ նյութերից են բաղկացած, դիտնականները վերցրել են զանազան տեղերից մի քիչ Հող և խառնել ջրի կամ մի ուրիշ հեղուկի մեջ, վորի ժամանակ հանքային աղերը լուծվել են նրանցում: Դրանից հետո այդ հեղուկներն իրենց մեջ լուծված հանքային աղերի հետ թափել են այնպիս, վոր Հողի մասնիկները բաժանվեն նրանցից, վորից հետո լուծվածքի մեջ ուսումնասիրել են այն հանքային աղերի հատկությունները:

Կա մի զիառթյուն, վորը կոչվում և քիմիա: Հենց այդ քիմիան և, վորն ուսումնասիրում ե զանազան աղերի ու նյութերի հատկությունները և իմանում, թե ինչ հիմնական նյութերից են կազմված այս կամ այն աղերը: Այդպիսի հիմնական նյութերը բնության մեջ չառ կան, բայց այն հանքային աղերից, վորոնցով սնվում են բույսերը, աճենից սկսականը դուրս յեկան յերեք հիմնական նյութեր: աղստը, ֆոսֆորը և կալին: Յեզ ահա յերը սպարզվեց, վոր բույսի համար դիմավոր սննդանյութերը հանդիսանում են աղասր, ֆոսֆորն ու կալին, կուրտուրական յերկրների հազարործները, սկսեցին աշաղբառություն դարձնել միայն այն հանքային աղերի վրա, վորոնցում կան աղստ, ֆոսֆոր կամ կալում:

Բույսերին անհրաժեշտ են նաև այլ սննդանյութեր, որինակ, մագնեզիում, ծծումբ. սակայն հողի մեջ նրանք գտնվում են մեծ քանակությամբ. այստեղ մենք նրանց մասին չենք խոսի:

Ինչքան այդ աղերից շատ լինեն հողի մեջ, այնքան նա հարուստ է համարվում:

Շատ լավ է, յեթե հողը հարուստ է, յեթե նրանում կտն մեծ քանակությամբ հանքային աղեր, վորոնք իրենց մեջ պարունակում են աղոտ, կամ ֆոսֆոր կամ թե կալի. իսկ յեթե հողն աղքատ է, յեթե նրա վրա յերկար տարիներ անդադար ցանել են և բույսերը կլանել ու տարել են հողի միջի ամրող հանքային աղերը, կամ նրանց մեծ մասը, այդ դեպքում պետք է մտածել, վերադարձնել հողին բոլոր հանքային աղերը, կամ ընդհանրապես պարարտացնել նրան սննդանյութերով:

Քանի վոր հայտնի յեն հանքային աղերի բաղադրությունները, վորոնք պարունակում են իրենց մեջ աղոտ, ֆոսֆոր և կալի, մարդիկ սկսեցին արհեստական կերպով պատրաստել այդպիսիք. կառուցվեցին մեծ քանակությամբ արհեստ. հանք. աղեր պատրաստող դործարաններ: Յեվ քանի վոր այդ աղերը հարստացնում են հողը, պարարտացնում նրան, ուստի իրենք ել ստացան հանքային պարարտանյութի անունը: Հանքային պարարտանյութերն ըստ իրենց մեջ պարունակած հիմնական սննդանյութերի, բաժանվում են յերեք տիպի.—1. Ազոտային հանքային պարարտանյութ, 2. Փոսֆորային և 3. կալիի: Կան նաև այնպիսի հանքային պարարտանյութեր, վորոնք միաժամանակ պարունակում են իրենց մեջ աղոտ և ֆոսֆոր, կամ ֆոս-

փոր ու կալի , որինակ՝ Փոսֆորակալիային պարարտանյութը :

Աղոստային Հանքային պարարտանյութերի (աշ-սինքն ազոտ պարունակող պարարտանյութերի) չար-քին են պատկանում .—1. Զիլիական սելիտրան , 2. ամմոնիում սուլֆատը , 3. ցիանամիդը , 4. նորվեգա-կան սելիտրան և այլն :

Յոսոֆորային պարարտանյութերի չարքին են պատ-կանում .—1. Սուլերֆոսֆատը , 2. Բոմաս-ցլակը , 3. Փոսֆորիտները և կալիի չարքին են պատկանում զանազան կալիի աղեր և մոխիրը :

Պարարտանյութերն իրարից տարրերելու համար պետք է իմանալ նրանց արտաքին տեսքը , գույնը , փշրփածքը , քաշը , այսինքն նրանց ֆիզիքական հատ-կամքունները . անհրաժեշտ է իմանալ նաև նրանց լուծվելու հատկությունը , բազակրությունը , հողի մեջ ամրանալու բնողունակությունը , այսինքն նրանց քիմիական հատկությունները :

1. Զիլիական սելիտրան իր արտաքին տեսքով նր-ման և սպիտակ աղի , բազկացած սոսանձին մանր բյուրեղներից : Այդ աղը հեշտությամբ է լուծվում ջրի մեջ , զրա համար և հողի մեջ մտցնելիս , հեշտությամբ ջրի հետ անցնում է հողի տակ , վորտեղից նա անմատ-չելի յե դառնում բույսի արմատների համար : Այդ իսկ պատճառով , սելիտրան միանամից մեծ քանակությամբ չեն տալիս հողին , այլ մի քանի անգամ և քիչ-քիչ , վորտեղի պարարտանյութն իզուր չկորչի :

Այս սելիտրան չիլիական և կոչվում , վորովհետե-արտահանվում և Հարավային Ամերիկայի Զիլի հան-րատեատությունից : Այնուղ այս աղը գտնվում է լու-

ներում տարբեր հաստության շերտերով, վորոնք սու-
լորաբար ծածկված են լինում ավաղով ու կափով:

Հանուծ սելիտրան մաքրում են, մեծ քանակու-
թյամբ փոխադրում Յեզրոպա, վորտեղ նա ոգտա-
գործվում ե պարարտացման նպատակներով:

2. Ամմոնիում սուլֆատ—սա մի սովորակ փոշի յե,
յուրահատուկ հոտով: Նա հեշտությամբ կլանվում և
հողի մեջ և մնում այն մասում, վորտեղ դանվում են
բույսի արմատները, դրա համար ել այս աղը, ինչ-
պես և մյուս բոլորը, կարելի յե 1 տարում միանգամից
մեծ քանակությամբ տալ հողին: Ինչպէս ամմոնիում
սուլֆատը, այնպես ել մնացած բոլոր աղոտային պա-
րարտանյութերը, շիլիական սելիտրի նման պատ-
րաստի վիճակում չեն լինում բնության մեջ, այլ
սուացվում են գործարաններում:

3. Ցիանամիգը կարելի յե հեշտությամբ զանա-
զանել մնացած բոլոր հանքային աղերից. արտաքին
տեսքով նա հիշեցնում և մուրը. սե գույնով, շատ
մանր փոշի յե: Այս աղի մանր մասնիկները շատ հեշ-
տությամբ ու արագ ցրվում են ողի մեջ. դրա համար
այս պարարտանյութը ցրելու ժամանակ պետք է ու-
շադրությամբ հետեւ, վորպեսզի նա ընկնի հողի մեջ
և վոչ թե քամին ցրի այս ու այն կողմը: Առհասարակ
ցիանամիգի հետ պետք է զգույշ վարպեւ, վորպեսզի
նա չընկնի աչքերին կամ բերանը, այլապես արտաս-
վարեր թաղանթն ու բերանը կդրզովեն:

Ցիանամիգ պատրաստելու համար մեծ քանակու-
թյամբ ելեքտրական եներգիա յե հարկավոր: Հայս-
տանում հեշտ ե եժան ցիանամիգ ստանալ, վորովհե-
տե գոյություն ունեցող ահաղին թիվով ջրիմները,

Հնաբարպության են տալիս հիդրոկայաններ կառուցել և դրա միջոցով ստանալ մեծ քանակությամբ եֆան հանքային պարարտանյութեր :

4. Եռորմեկական սելիտրան—սա կլորաձև բյուրեղներից կազմված սղիտակ նյութ է, վորով և հեշտ և տարրերից ամենինում սուրբատից : Սա պետք և պահել առանձնապես չափ չոր տեղում, վորովհետեւ այս այլը հեշտությամբ իրեն և քաշում խոնավությունը և տարածվում : Եռորմեկական և կոչվում, վորովհետեւ պատրաստող գործարանները մեծ ժամամբ դժոնվում են Եռորմեկայում :

Ինչպես սկզբում առվեց, ազոտը հանդիսանում է մեկը հիմնական սննդանյութերից, սա այն զյամփոր նյութն է, վորից կազմվում են բույսի հյուսվածքները :

Վորոտեղի հնաբարպոր լինի վորոշել, թե բույսին ինչքան և հարկավոր այս կամ այն պարաբռանյութերից, վորմեկը են կատարել յերկութեւ անոթներում : Վերցրել են 2 անոթ, մեկում լցրել են բույսի համար անհրաժեշտ բույր տեսակի աղերի հետ խառնած ափազ, բայց տանց աղոտային հանքային պարաբռանյութերի, այսինքն, տանց աղոտի, իսկ մյուսում լցրել են նույն տեսակի աղերի հետ խառնած ափազ, ինչ կար տուածին անոթում և ամելացրել աղոտային պարաբռանյութեր : Նշանակում է յերկրորդ անոթում յեղել և նույն աղոտ :

Յերկու անոթների մեջ էլ տնկել են նույն բույսի սերմերը և հետեւ նրանց զարգացմանն ու այն բերքին, վոր նրանք ավել են : Պարզվեց, վոր տուածին անոթում, վորանգ աղոտ չկար, ստացվեց վորքրիկ, չպարզացած բույս, վորը բարուսին պատուղ չտվեց,

մինչդեռ յերկրորդ անոթում, վորտունով ազոտ կար,
բույսն ուժեղ զարդացավ, հասակով մեկ բարձրացավ
և մեծ բերք տվեց: Նկար 2-ում ցույց են տրված յե-



Նկար № 2

ԱՌԱՆՑ ՍԵԼԻՏՐԱ ՑԻԱՆ-ԱՍԻԴ
ԱԶՈՏԻ

բեք այլպիսի անոթներ. ձախ կողմի անոթում աղաս
բոլորովին չկա, մեջտեղի անոթի մեջ ավելացրած և
չիլիական սելիտրա, իսկ այլ կողմինում—ցիանամիո:

Բոլոր յերեք անսթիւերի մեջ ել տնկված և միեւնույն բույսը—հնդկացորեն։ Այստեղից պարզ յերեւոմ է, թե ինչպես վատ և ամել հնդկացորենն առանց ազտի, և ինչպիսի հրաշալի բույսեր են ստացվել ոյն անսթիւերում, վորտեղ ազտային պարարտանցութեր—չիլիական սելիտրա կամ ցիանամիր և յեղել։

Հնդկանրատես ազտ չեղած հողում բույսերը յերեւք չեն զարգանում և բերք չեն տալիս, այդ իսկ պատճառով ազտ պարունակող հանքային պարարտանցութերը մեծ նշանակություն են ստանում։

Ֆոսֆորային պարարտանցութերից (այսինքն ֆոսֆոր պարունակող) բնական դրության մեջ պատահած են միայն ֆոսֆորիտները հանածո-չերտավլոր վիճակում։ Շատ ֆոսֆորիտներ կան Ամերիկայում և Ավրիլայի հյուսիսային մասում։

Խորհրդային Միության մեջ ես կան մեծ քանակությամբ ֆոսֆորիտային հանքեր՝ կուրսկի, կոստրոմայի և Վլատկայի նահանգներում։ Հանած ֆոսֆորիտն ազացվում և արդեն և ալյուր զարձած գործադրվում վորովես հանքային պարարտանցութ։ Այնուամենայնիվ ֆոսֆորիտների մեջ քիչ են սննդանցութերը—ֆոսֆորը, բացի դրանից, ֆոսֆորիտները մեծ գժվարությամբ են լուծվում։ Քանի վոր նրանք գլցվարությամբ են բաւծվում, ազա և բույսին համոզ չըի մեջ ել նրանք քիչ կլինեն ու քիչ ողուտ կատարույին։


Այդ պատճառով գործարաններում ֆոսֆորիտը վերամշակում են և նրանից ստանում այնպիսի պարարտանցութ, վորի մեջ թե ֆոսֆորն և շատ և թե

Հեշտությամբ և լուծվում ջրի մեջ։ Վերամշակած սոյդ
պարարտանյութը կոչվում է սուպերֆուֆատ։ սո
մոխրագույն, հեշտությամբ փշրվող փոշի յե։ Նրա
մասնիկները շատ ծանր են։ Յեթե վերցնենք վորեն
աման կամ բանկա, լցնենք նրանում սուպերֆուֆատ և
կշռենք, հետո այդ նույն ամանի մեջ լցնենք ցիանա-
միդ ու կշռենք, կտեսնենք, վոր սուպերֆուֆատը հա-
մարյա թե յերկու անգամ ծանր է ցիանամիդից։ Որի-
նակ, յեթե սուպերֆուֆատով լցրած ամանը կշռում է
2 կիլո, ցիանամիդով լցրած նույն ամանը կկշռի
1 կիլո։

Ծնորհիվ նրա, վոր 1) սուպերֆուֆատի մեջ
աննդանյութը (Փոսֆորը) ավելի շատ և, 2) սուպեր-
ֆուֆատը հեշտությամբ և լուծվում ջրի մեջ և 3) ա-
ավելի քիչ տարա յե հարկավոր մի տեղից մյուս տեղը
փոխադրելու համար, ուստի Հայաստանում ավելի
ձեռնտու յե հողը պարարտացնել սուպերֆուֆատով,
քան Փոսֆորիտով։

Բացի Փոսֆորիտից և սուպերֆուֆատից, կա
դարձյալ մի ուրիշ Փոսֆորային պարարտանյութ։ Այն
զործարաններում, վորտեղ չուպունը վերամշակում էն
և վերածում յերկաթի կամ պողպատի, ստացվում են
մնացորդներ—անպետք մասեր, վորը կոչվում է քո-
մաս-շլակ և վորն իր մեջ Փոսֆոր և պարունակում։
Ավելի լավ և այդ թոմաս-շլակով պարարտացնել ճահ-
ճային տեղերը։

Ինչպիսի փորձեր վոր դրել եյին աղոտային պա-
րարտանյութերով, նույն տեսակի փորձեր դրել են
նաև Փոսֆորային պարարտանյութերով։ Այդ փորձե-



Նկար № 3

Առաջ ՖՈՍՖՈՐ 2½ ԱՆԳ. 5 ԱՆԳ. Ա 10 ԱՆԳ. ՍՈՒՊԵՐ
ՖՈՍՓՈՐԻ ՔԻՉ ՔԱՆԱԿ ԱՎԵԼԻ ՎԵԼԻ ԱՎԵԼԻ ՖՈՍՓՈՐ

մերցրուծ են և հատ յերկաթե անոթներ ։ Նրանք բոլորը
յօրած են ավագով, ավաղի հետ խառնված են այն բո-
լոր հանքային աղերր, վորոնք հարկավոր են բույսին
սննդի համար, բացի առաջինից, վորոնեղ ֆոսֆորը
բացակայում է :

Բոլոր անոթների մեջ ցանկում է միենալին բույ-
սը—Հնդկացորեն :

Զախ կողմի առաջին անոթում ֆոսֆոր բոլորովին
չկա և բույսն առանց ֆոսֆորի այնպես ել փոքր և մը-

նացել և չի կարողացել ավելի սկզել։ Յերկրորդ ամսանում արդեն ավելացրած ե մի քիչ ՓոսՓորիտ։ յերրորդի մեջ ՓոսՓորիտը 2¹/₂ անգամ ավելի շատ է, քան յերկրորդում, չորրորդում օ անգամ շատ և և հինգերորդում՝ 10 անգամ։

Բոլոր 4 անոթներում բույսերն ավելի յեն աճել, քան առաջինում, բացի դրանից, ամենից լավ վիճակի մեջ են հինգերորդ անոթի մեջ յեղածները, վորտեղ ամենից շատ ՓոսՓորիտ և խառնված ավաղի հետ։ Բայց յեթե նայենք աջ կողմում յեղած ամենավերջին անոթին, կտեսնենք, վոր այստեղի բույսն ամենից մեծն և, նույնիսկ ավելի մեծ, քան այն անոթներինը, վորտեղ ՓոսՓորիտ ևր ավելացրած։ Բանից դուրս ե դալիս, վոր հենց այստեղ սուպերՓոսՓատ ևր խառնված։ Այստեղից պարզ և, վոր ինչպես սկզբումն ևր ասվեց, լավագույն ՓոսՓորային պարարանյութը հանդիսանում և սուպերՓոսՓատը։

Բացի աղստից և ՓոսՓորից, յերրորդ սննդանյութը կալին և, վորը զանգում և կալիի զանազան տղերի, ինչպես նաև սովորական մոխիրի մեջ։

Սկզբներում կալիի աղերն ստացվում ելին միայն Ավստրիայում, բայց վերջին տարիների հետախուզումները ցույց տվին, վոր կալիի խոշոր հանքեր կան նաև Խորհրդային Միության մեջ—Սոլիկամսկ քաղաքի մոտերքը։ Երդ նկարից յերեսում և, թե ինչպես վատ են աճում բույսերը—վարսակն այն անոթում, վորտեղ կալի բոլորովին չկա և ինչպիսի լավ բերք և սուացվել այն անոթների մեջ, վորտեղ ավաղի հետ խառնված են կալիի զանազան աղեր։ Մոխիրը,



Նկար № 4.

ԱՌԱԽ ԿՈԼԻԲ ԿՈԼԻԲ ՏԱՐՏԱՐԱՆՑՈՒԹԵՐ

վորր թեղիտ ավելի քիչ կալի յև պարանակում իր
մեջ, քան կալիի ազերը, բայց և այնողիս նրա մեջ կա
նահ ֆոսֆոր, ուստի նա վոչ միայն սոսկ կալիի պա-
րարանն յութ և, այլև ֆոսֆորո-կալիային :

III. ՀԱՆՔԱՑԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹԵՐԻ ՊԱՀԵԼԸ

Հանքերից ստացված կամ գործարաններում պատրաստված հանքային պարարտանյութերը լցվում են պարկերի մեջ և այդ դրությամբ փոխադրվում հողագործների—գյուղացիների մոտ, վորոնք պահելով այդ պարարտանյութերը, հարկավոր ժամանակ տանում են դաշտերը, հողը պարարտացնելու համար։ Հանքային պարարտանյութերը միշտ պետք է պահել չոր տեղում, —չոր պահեստաներում կամ սարայներում։ Յերբեք չի կարելի հանքային պարարտանյութերով լցրած պարկերը թողնել բաց յերկնքի տակ։ անձրեկ տակ աղը թրջվում ե և սննդանյութերը ջրի հետ միասին լվացվում են, իսկ սա նշանակում ե, վոր աղը կորցնում է իր արժեքը։ Յեթե պարարտանյութերով պարկերը թողնենք խոնավ տեղ, ասկա դարձյալ աղի վերին մասուերն իրենց կքաշեն խոնավությունը, կսկսեն խոնավանալ և քանի վոր այդ ժամանակ թթու նյութեր կդոյանան, պարկերը կսկսեն փշանալ, ամեն տեղ կսկսեն ծակոտիներ յերեալ և քիչ ժամանակից հետո, պարկերը կսկսեն քայքայվել։

Նույն բանը վերաբերում է նաև մոխրին։ գյուղացիները կամ բոլորովին չեն ոգտագործում մոխրը, վորովհետեւ չդիտեն, վոր նա իր մեջ պարունակում է յերկու գլխավոր սննդանյութեր—այն և ֆուֆոր ու կալի, կամ յեթե ողտագործում են, ասկա թողնում են նրան յերկար ժամանակ բաց յերկնքի տակ։ Անձրեները դալիս են, նրա մեջ յեղած բոլոր սննդանյութերը ջրի հետ միասին դուրս են տալիս և հետո միայն գյուղացին, բույսի համար բոլորովին վոչ սննդառառ մո-


խիրը առնեում է դաշտ։ Այդպիսի մսխրից ողուտ չկա-
զրա համար ել մսխրը պետք է պահել չոր անկում և
անկային պաշտպանել նրան անձրենից ու ջրից։ Հար-
մար չենք չիններու դեպքում կարելի յե պահել ծած-
կերի տակ։

Հանրային պարաբռանյութերով պարկերը վոչ մի
դեպքում չի կարելի թողնել զաշտում։

IV. ԵնջՊԵՍ ՊԵՏՔ և ԴՆԵԼ ՓՈՐՉԵՐԸ, ՎՈՐ-
ՊԵՍՉԻ ՀԵԱՐԱՎԱՐ ԼԵՆԵ ՊԱՐՉԵԼ, ԹԵ ԵՆՋ-
ՔԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԱ-
ԲԵՔ ԱԽԵԼ ՀԱՐԴ

ՄԵՆՔ ծանոթացանք, թե ինչոքս բույները սնունդ
են սուսնում հոգի մեջ յեղած աղերից։ Բնշովիսի ար-
հեսանկան հանրային պարաբռանյութեր կան, ինչոքս
նրանք բարձրացնում են բույնի բերքատվությունը և
ինչոքս պետք է պահել, վերափազի զարս չգտն նրանց
մեջ յեղած սննդանյութերը։ Այժմ անցնենք այն հար-
ցին, թե ինչ հանրային նյութերով պիտի պարաբ-
ռացնել այս կոտ այն ահսակի հոգերը։ Բայց հայտնի
յե, վոր հոգերը բարրագին տարբեր տիպի յեն լինում,
վոր հահետօքս նրանցում պարանակվում են նույն
տարբեր ահսակի պարաբռանյութեր, բնդվորում մի
ժամկ մեջ կարող ե շատ լինել, մյուսում քիչ։

Այսպես՝ սեահազում շատ ե ազտար, իսկ ֆոսֆորն
ու կալին քիչ։ Կագային հոգերում բնդհակառակը,
շատ է ֆոսֆորը, քիչ է ազտար։ իսկ ավազոս հոգերն
առհասարակ զուրկ են պարաբռանյութերից՝ նրանցում
թե ազտար, թե ֆոսֆորը ե թե կալին չափազանց
քիչ։



Հասկանալի յեւ, վոր այն հողերը, վորոնց մեջ, ու-
րինակի համար, շատ եւ աղոտը, կարիք չկա պարար-
տացնել աղոտային պարարտանյութերով, վորովհետեւ
առանց այն ել նրանց մեջ այնքան աղոտ կա, վոր
բույսերը—ցորենը, զարին, բամբակենին, կարող Են
աճել ու լավ բերք տալ: Այդպիսի հողերը պետք եւ
ովարարտացնել Փոսֆոր պարունակող պարարտանյու-
թերով, վորովհետեւ յեթե Փոսֆորը քիչ լինի, բույսը
չի կարող լավ աճել: Զե՞ վոր բույսը կարող է աճել և
լավ բերք տալ միայն այն ժամանակ, յերբ հողում լի-
նեն բոլոր Յ պարարտանյութերը—թե աղոտը, թե
Փոսֆորը եւ թե կալին: Հետեաղես պետք է իմանալ,
թե վոր հողին, վոր դաշտին ինչպիսի պարարտանյութ
պետք է տալ: Ճիշտ եւ, սեահողը շատ աղոտ ունի իր
մեջ, բայց սեահողից—սեահող շատ տարրերություն
կա, մեկում կարող է բավարար շափով լինել, մյուսում
պակաս: Հողի մեկ տեսակից չի կարելի յեղբակացնել,
թե ինչ պարարտանյութ պետք է տալ դաշտին: Ուրեմն
ի՞նչ անել:

Դրա համար վորձերը պետք եւ դնել ուղղակի դաշ-
տում, վորն ինքնուրույն կերպով կարող է անել յու-
րաքանչյուր դյուզացի: Դրա համար դաշտում պետք է
վերցնել ուղիղ ու հարթ ^{1/2} հեկտ. տարածությամբ
հողամաս, այնպես վոր նա քառանկյունի ձև ունենա:
Այդ հողամասի վրա յել պետք է դնել վորձը: Հողա-
մասը պետք եւ լավ վարել, վոցինել առնվազն յերկու
անգամ, վորպեսզի հողը մաքրվի մոլախոտերից և մեծ
հողակոչտերը փշրվեն: Վորձը պետք է կատարել ոյն-
պիսի հողամասի վրա, վորն անցյալ և նախանցյալ

տարբիներում չեն պարարտացվել դոժաղրով կամ մոխրով :

Բացի դրանից, կարեոր և, վոր արդ հոգածառում անցյալ տարի ցանցած լիներ միենաւին բույր, աշումնքն օսր այլ ամրող հոգածար լիներ բամբակի, ցորենի կամ թե մի ուրիշ բույրի տակ : Յեթե այն հոգածար, վորի վրա յենթաղ բիտում և վորձեր դնել, մի մասում ցանցած լիներ ցորեն, իսկ մյուս մասում բամբակ կամ դեմախճնար, ապա հոգածառն անհայտապար կլինի, այսինքն մի մասում մի տեսակի սնինդանյութերը չափ կլինեն, մյուսում քիչ : Այս բանն առաջանաւ և նրանից, վոր բամբակենին վերցնում և հոգից այլելի չափ մի տեսակի սննդանյութեր, իսկ ցորենն այլ տեսակի :

Բացի դրանից, բամբակենու արմատները մեծ լիներով ամելի խորն են զնում հոգի մեջ և բնական և, առնում ամելի խորը հոգաչերակի սննդանյութերը, իսկ ցորենի արմատները բարակ ու փնջածե են, խորը չեն զնում և վերցնում են հոգի վերնաչերակ սննդանյութեր : Այսիմն վորձը ովեաք և զնել այնպիսի հոգածարի վրա, վորակդ սննդանյութերը հայտառը չափով են բամբակած :

Նրանից հետո միայն, յերբ կոպարովի, վոր հոգածար նոտիւրդ և տարբիներում չի պարարտացվել զամազրով, բուսուով կամ մախրով, և նրանում անցյալ տարի ցանցին և միենաւին բույր, կարելի յե նրան համարել պիտանի վորձը զնելու հոգար :

Յենթաղբենք հորկասոր և պարզել, թե ինչ պարբառանյութերի կարիք ունի այլ հոգածարի վրա ցանցած ցորենը : Դյաղացին ունի ապառ պարտնուկող պա-

բարտանյութ—ցիանամիդ և ՓոսՓոր պարունակող
պարաբտանյութ—սուպերֆոսֆատ : Նշանակում է
պետք և իմանալ , ինչն է պակասում հողի մեջ , ո-
դո՞ւր , թե՞ ՓոսՓորը , կամ գուցե և յերկուոր միասին :

Դրա համար ամբողջ հողամասը պետք և բաժանել
և հավասար մասերի , ինչպես ցույց և տված 5-րդ

№ 1	№ 2
ՊԱՐԱՐՏԱՑՐԱԾ ԶԵ	ՑԻԱՆԱՄԻԴ
№ 3	№ 4
ՍՈՒՊԵՐՖՈՍՖԱՏ	ՑԻԱՆԱՄԻԴ + ՍՈՒՊԵՐՖՈՍՖԱՏ

Նկար 5. ՓՈՐՁԻ ՍԽԵՄԱ

նկարում : Այլ մասերը կոչվում են հողակառներ :
Բանի վոր ամբողջ հողամասի ապրածությունը՝
հեկտար և , ուրեմն յուրաքանչյուր հողակառը հայտ-
առը կլինի և հեկտարի : Գետք և բուլոր հողակառ-
ները համարակալել : Առաջին հողակառին չառի վոչ
մի պարաբտանյութ , յերկրորդը պարաբտացնել միայն
ցիանամիզով , յերրորդը միայն սուպերֆոսֆատով ,
իսկ չորրորդ հողակառը պարաբտացնել թե ցիանա-
միզով և թե սուպերֆոսֆատով : Առաջին հողակառը ,
վորը վոչնչափ չի պարաբտացրած , կոչվում է կոնտրոլ
հողակառը , վորովհեան նա ծառայում և վորովս
սուպերֆիչ մնացած հողակառների համար , վորոնք պա-
րաբտացրած են :

Այս կոնտրոլ հաղակառքի բերքը համեմտանենք
Հ-րդ ։ Յ-րդ և Գ-րդ հաղակառքների բերքի հետ :

Հաղակառքներն իրարից հեշտությամբ բաժանելու
համար կարելի յե պարագաստել փոքրիկ ցցեր և նրանց
վրա զրել ու մատխառվ՝ լին հաղակառքի համար «Օ»
(այսինքն վոչնչով չի պարարտացրած)։ Նզ Հ-ի հա-
մար «ցիսնոմիկ» ։ Նզ Յ-ի համար «սուսերֆոսֆատ»
և Նզ Գ-ի «ցիսնոմիկ-սուսկերֆոսֆատ» և ամեն մեկը
ցցել համազատախան հաղակառում :

Այժմ յերբ հաղամար վարած է, փոցխում և բա-
ժանած 4 մասի, կարելի յե հաղակառքները պարա-
րտացնել :

Ելթե աշխանացան ցորեն և, ազա դաշտը պա-
րարտացվում է զարնանից, իսկ յեթե զարնանացան
ցորեն և, կամ փորձերն արվում են ուրիշ կուրուրա-
ների (բամբակենի, ճակնդեղ, զետեախնձոր), ազա
դաշտը պարարտացվում է աշխանից :

Դաշտը պարարտացվում է ցանելուց մի քանի ա-
միս առաջ, փորովեսպի պարարտանյութը ժամանակ ու-
նենալ լուծվել, քայլքայվել և վերածվել այնպիսի վի-
ճակելի, փորովիսի վիճակում բույսերի արժանաները կա-
րուց են բնդունել ջրի հետ միասին։ Ելթե ինչ-ինչ
պատճառներով հարավոր չե այլպես վազ պարար-
տացնել, ազա կարելի յե այդ բանն անել Յ շարաթ ա-
ռողջ, նախքան վարելը։ Այս կարզը չի իմական սելիս-
րին չի վերաբերում, փորովհետեւ նրանով պետք է
պարարտացնել անօիջապես նախքան ցանելը :

Մինչեւ հաղակառքների պարարտացնելը, պետք է
իմանալ, թե ինչքան ցիսնոմիկ կամ սուսերֆոսֆատ

պետք և տալ հողին։ Դրա համար գոյություն ունի
նորմա, այսինքն 1 հեկտար հողին արվելիք պարագա-
նյութի քանակը։ Այդ նորման պետք և շատ լինի, յեթե
պարարտանյութերի մեջ սննդանյութերը քիչ են և քիչ
լինի, յեթե պարարտանյութերի մեջ սննդա-
նյութերը շատ են։ Դրա համար ել տարբեր
պարարտանյութերի նորման տարրեր կլինի,
վորովհետեւ սննդանյութերը զանազան քանակու-
թյամբ կան նրանց մեջ։ Սուպերֆոսֆատի համար
կա 2 նորմա, վորովհետեւ կա 2 աեսակի սուպերֆոս-
ֆատ— հասարակ և կրկնակի։ Հասարակ սուպերֆոս-
ֆատի մեջ ֆոսֆորը քիչ և, և այդպիսին հողին արր-
վում և 1 հեկտարին 320 կլգ. հաշվով, իսկ կրկնակիի
սուպերֆոսֆատի մեջ ֆոսֆորը շատ և և այդպիսին
հողին արվում և ավելիք քիչ, 1 հեկտարին 200 կլգ.
հաշվով։ Ցիանամիտ արվում և 1 հեկտարին 240 կլգ.։
Այժմ քանի վոր մենք գիտենք, թե ինչքան ցիանամիտ և
արվում և ինչքան սուպերֆոսֆատ 1 հեկտարին, կա-
րելի յե հաշվել, թե ինչքան պետք և արվի ցիանամիտ
և սուպերֆոսֆատ փորձի համար վերցրած հողակր-
տորներին։

Յուրաքանչյուր հողակտորը կազմում է 13 հեկտ.
յեթե մեկ հեկտարին արվում է 240 կլգ. ցիանամիտ,
նշանակում է ամեն մի հողակտորին պետք և տալ 8
անգամ քիչ, այսինքն 240 : 8=30 կլգ., հասարակ
սուպերֆոսֆատ արվում է 1 հեկտարին 320 կլգ., իսկ
մեկ հողակտորին 320 : 8=40 կլգ.։

Նշանակում է 2-րդ հողակտորին պետք և տալ 30
կլգ. ցիանամիտ, 3-րդին 40 կլգ. սուպերֆոսֆատ,

իսկ 4-րդին 30 կրկ - ցիսնամիտ և 40 կրկ - սուսպեր-
ֆունդատ:

Այժմ արգեն կարելի յե անցնել պարաբռանցութե-
րը ցրելուն: Դրա համար սկսում են շրջ հողակոսո-
րից կշռում են 30 կրկ - ցիսնամիտ, լցնում այլպի-
սին մի կտոր բրելինարի կամ մի այլ հարմար կտորի
վրա և յայտ մանրացնում: Հետո նրան ամելացնում է
անդամ ամելի չոր մանր հազ ու խոսնում: Պետք է
խոսնել այնքան, վոր ստացվի միտեար խոսնուրդ:
Հոգը նրա համար են ամելացնում, վորովելի ոպարար-
տանըրթիր համաստր չտիտով տարածվի հողի մեջ և
բամբին չկարողանա ցրել այս ու այն կողմ: Քանի վոր
հողի հետ խոսնելուց խոսնուրդը ձանրանում է և
հեշտությամբ բնելում հողի վրա և մնում: Առհասա-
րակ պետք է աշխատել պարաբռանցութերը ցրել, յերբ
բամբիներ չկան, յեղանակիր հանդարտ է:

Պարաբռանցութիր հողի հետ խոսնելուց հետո, լրց-
նում են զույլի կամ պարկի մեջ, բնելում ձախ ձեռքափ,
խել ովով վերցնում բուզ և ցանում ճիշտ այնպես,
ինչպես ցանում են ցորենը կամ տուժուրը: Անցնում է
մինչեւ հողուկտորի վերջը, չուռ զայիս և այլպիս շա-
րանակում, մինչեւ ամբողջ հողուկտորը պարաբռաց-
վի: Պարաբռանցութիր պետք է ցրվի համահամատր
չտիտով և այնպես շինի, վոր մի անգ չտու բնելինի, մի
մի անգ քիչ: Դրա համար հարկացնը է պաթարանցու-
թիր ցրել այն հաշվատ, վոր առաջին անդամ ցրվի խոս-
նուրդի կեսը, խել վերապարձին՝ մյաս կեսը, այսպի-
սով պարաբռանցութիր համահամատր է բաժանվում:

Այսուհետեւ անցնում են № 3 հողուկտորին: Կրչ-
ուում են 40 կրկ - սուսպերֆունդատ, հողի հետ խոսնում

ու պատրաստում ճիշտ այնպես, ինչպես ցիանամիզը
և նույն ճեղք պարաբռացնում հոգակտորը:

№ 4 հոգակտորին պետք է տալ 30 կլգ. ցիանամիզը
և 40 կլգ. սուպերֆոսֆատ: Ակդրում առանձին
պատրաստում են ցիանամիզի խառնելով հոգի հետ և
պարաբռացնում հոգը, հետո սուպերֆոսֆատը խառ-
նում հոգի հետ և պարաբռացնում նույն հոգակտորը:
Ցիանամիզը խառնել սուպերֆոսֆատի հետ և այդ
խառնութեղով պարաբռացնել հոգակտորը՝ չի կարելի:

Այսուհետեւ, յերր բոլոր հոգակտորները բացի №
1 կանտրոլից, պարաբռացված են, պետք և պարաբ-
ռանյութերը խառնել հոգին, վորր կարելի յե անել
յերկաթե «Զիզ-զազ» փոցիսով կամ կուլտիվատորով,
յեթե խառնում են փոցիսով, ապա հոգամասով անց-
նում են 2 անգամից վոչ պակաս, կուլտիվատորը պետք
և զնել վոչ մեծ խորությամբ:

Փետք և փոցիսել վոչ միայն պարաբռացրած հո-
գակտորները, այլև կոնտրոլ (№ 1-ը), չնայած վոր-
նա չի պարաբռացրած: Ահա թե ինչու համար և դա
արվում:

Փոցիսելը, բացի նրանից, վոր պարաբռանյութերը
խառնում և հոգի հետ, նաև մանրացնում և հոգը, ջար-
դում նրա մակերեսին բարակ կեղեր և զրանով պա-
կասեցնում ջրի գորորչիանալը հոգից: Յեթե փոցիսեն
միայն պարաբռացրած հոգակտորները, խակ կոնտրու-
հոգակտորը՝ վոչ, ապա վերջինս կղրվի ամելի վաս-
պայմաններում, քանի պարաբռացրածները, վորովհետեւ
կոնտրու հոգակտորի կեղեր չի ջարզվի և հոգը շատ
շուտապ կչորանա:

Փորձի ընթացքում միշտ ել պետք և հետեւ, վոր

բուրք չորս հոգակտութեներն ել ամեն ժամանակ պրա-
յամին միենայն պայմանների մեջ, այլազես յեթե նր-
քունք տարեր պարմանների մեջ յինքն, մենք ել տար-
յեր րեբք կատանանք նրանցից և շնոր խմանա, թե ինչ
պատճառով բերքը տարրեր եւ փորովնեան մեկ հոգա-
կտորը պարաբռացրած եր, մյուսը վոչ, կամ մեկ հո-
գակտորը փոցխած եր, խել մյուսը վոչ: Այս ձեռք
պարաբռացրած հոգամասը թողնվում է մինչեւ ցանքը:

Փորձնական հոգամասի վրա ցանքը պետք է կո-
տարել մերենայով:

ՅԵԹԵ ցանում են ցորեն կամ դարի, տպա չարքա-
ցանով կտառարում են համառարած ցանքը հոգամասի
րուր հոգակտորների վրա: Մե կոնորու և թե պարաբ-
ռացրած հոգակտորները ցանվում են բորբոքին միա-
նման:

Շարքացանով պետք է ցանել նոն բամբակենին,
յեթե փորձերը նրա վրա յեն կտառարօնում: ՅԵԹԵ փորձ-
նական հոգամասի վրա ցանում են ձակնողեղ, կամ ծր-
խախոս կամ թե զենոնինձոր, տպա ցանքը կտառ-
րում են լորի միջոցով: Հոգակույտի մի ծայրից մինչեւ
մյուս ծայրը լոր են անցկացնում և նրա ուզգությամբ
փոքրիկ փասիկների մեջ ուրծերը տնկում, փորպեսզի
ուզից չարքեր ստացվեն: Յանելուց հետ փորձնական
հոգակտորները ջրօնում են, ի հարկե վոչ ջրավի շրջան-
ներում, հոգակտորները շեն ջրում: ՅԵԹԵ ջրում են
ձարգերով, տպա պետք է զաշար մարկուել և հետ
ձարգերով յրել ամրոց հոգամասը:

ՅԵԹԵ փորձը ծխախոսի վրա յե կտառարօնում,
ուժիները տնկելուց առաջ փորձնական հոգամասի
րուր և հոգակտորներն ել պետք և բաժանել թմբերի և

Հետո միայն տնկելու ջրել։ Պետք է ջրել այնպես, վոր ջուրը մի հողակառըից շանցնի մյուս հողակառը, այլապես կսասացվի այն, վոր ջուրն որինակ, կանցնի այն հողակառըից, վորտեղ ցիանամիտ եր խառնած հողին. ցիանամիտը մասամբ կլուծվի ջրում, հետո այդ ջուրը կանցնի կանորու հողակառը, վորտեղ պարարտանյութ բոլորովին չոլեաք ե լինի, և այստեղ իր մեջ լուծված ցիանամիտի հետ կանցնի հողի մեջ։

Այդպիսով ամրողջ փորձը կիսառնի, վորովհետեւ չի մնա կանորու հողակառը, վորի բերքի հետ պետք եր համեմատության դնել պարարտացըրած Յ հողակառների բերքը։ Բացի դրանից ամրողջ փորձի ջրելը պետք է վերջացնել 1—2 որում, վորովհետի չորս հողակառումն ել սերմերը միամամանակ ծրեն և լինեն համահավասար պայմաններում, վորը շափազանց անհրաժեշտ ե մեր փորձի համար։

Վ. ԻՆՉՊԵՍ ՀԵՏԵՎԵԼ ԲՈՒՑՍԻՆ և ՀՈՂԻ ՄՇԱԿԵԼ ՓՈՐՁԻ ԺԱՄԱՆԱԿ

Փորձնական հողամասի վրա ցանքան անելուց հետո, պետք է հոդ տանել այն մասին, վորովհետի հանքային աղերն ինչպես հարկին և քայլքային ու լուծվեն բույսերի տաման ամրողջ ժամանակամիջոցում։ Աղերի կազմալուծվելու համար հարկավոր է վոչ միայն ջուր, այլև ոգ։ Յեթե աղերն բնկնեն այնպիսի հոդում, վորտեղ ողը չի անցնում, նրանք այնտեղ չեն կազմալուծվի և չեն կարող պիտանի լինել բույսի համար։

Ազոտ պարունակող հանքային աղերը (պարարտանյութեր) ինքն բառ ինքյան չեն կազմալուծվում, նրանց կազմալուծում են հողի մեջ աղը մանր եյտկները։ Այդ եյտկներն այնքան մանր են, վոր նրանց կարելի չե-

Նիստել միայն շատ ուժեղ մեծացնող ապակու—իս-
չորսցոյցի միջրասկզբ միջոցով : Ահա միայն այդ
խոշորացայցների միջոցով կարելի յէ տեսնել այն ե-
յակները, մորոնք կազմալուծում են աղոտային հան-
գոյն աղերը : Այդ եյտեները մեծ բանակությամբ
ապրում են հոգի մեջ և շատ ողտակար են գյուղատրն-
ուառության համար : Երանք կոչվում են բականերիաներ :

Բայց չպետք է կարծել, թե ուզոր բականերիաներն
ել ողտակար են : Կան բականերիաներ, մորոնք շափա-
զանց մնասակար են, մորովհետեւ նրանք զանազան հի-
մոնդություններ են առաջացնում և տարածում : որի-
նակ ամփի բականերիան շատ մնաւ և մարդուն : Նրանք
մեծ բանակությամբ լինելով ողի մեջ, բնկնում են
մարդու մեջ և առաջացնում ամփի հիմոնդությունը :
